

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. **ԳՈՐԾՈՒՂՎԱԾ ԱՆՁ**

Գարեգին Բաղրամյան

2. **ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԸ**

ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարի տեղակալ, ՀՀ պատվիրակության ղեկավար

3. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՎԱՅՐԸ/ԺԱՄԿԵՏԸ**

Ավստրիայի Հանրապետություն, քաղաք Վիեննա

4. **ՀՐԱՎԻՐՈՂ ԿՈՂՄԸ**

Ատոմային էներգիայի միջազգային գործակալություն

5. **ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ**

Ս.թ. սեպտեմբերի 17-ից 21-ը ք. Վիենայում տեղի ունեցած ԱԷՄԳ-ի Գլխավոր Կոնֆերանսի 62-րդ նստաշրջանի մասնակցություն:

6. **ՔՆՆԱՐԿՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԸ**

ԱԷՄԳ-ի Գլխավոր Կոնֆերանսի 62-րդ նստաշրջանի ընթացքում տեղի են ունեցել քննարկումներ ԱՄՆ Տեխասի նահանգի միջուկային էներգետիկայի ինստիտուտի ներկայացուցիչների, ԱԷՄԳ-ի տեխնիկական աջակցության ստորաբաժանման ղեկավարի, ԱԷՄԳ-ի սեյսմիկ և հրաբխային ռիսկերի գնահատման ստորաբաժանման, Ֆրանսիայի Հանրապետության, Ղազախստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդավարական Հանրապետության պատվիրակությունների ներկայացուցիչների հետ

7. **ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐԸ, ԵԼՈՒՅԹՆԵՐԸ, ԲԱՐՁՐԱՑՎԱԾ ԿԱՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ ՀԱՐՑԵՐԸ**

Ս.թ. սեպտեմբերի 17-ին կայացել է ՀՀ պատվիրակության և ԱՄՆ Տեխասի նահանգի Միջուկային էներգետիկայի ինստիտուտի ներկայացուցիչների հանդիպումը: Հանդիպման ընթացքում ԱՄՆ Տեխասի նահանգի Միջուկային էներգետիկայի ինստիտուտի ներկայացուցիչները տեղեկացրեցին իրենց ինստիտուտի հնարավորությունների մասին, մասնավորապես ուսումնական վարժանքների իրականացման հնարավորության և առկա փորձի մասին, պատրաստակամություն հայտնեցին ներգրավել մասնակիցներ նաև Հայաստանից: Տեխասի նահանգի միջուկային ինստիտուտը մասնագիտացված է արտակարգ իրավիճակներում ստեղծված վթարի կառավարման, վթարի հետևանքների մեղմացման և բնակչության պաշտպանության կազմակերպման հարցերում: Յուրաքանչյուր տարի անց են կացվում երկշաբաթյա միջազգային դասընթացներ, որոնց կարող են մասնակցել ուսանողներ և մասնագետներ նաև Հայաստանից: Տրամադրվել են ինստիտուտի մասին տեղեկատվական նյութեր, որոնք կփոխանցվեն Հայաստանի Ազգային Պոլիտեխնիկական Ինստիտուտին, հետագա համագործակցության ընդլայնման նպատակով:

Սեպտեմբերի 17-ին կայացավ հանդիպում ԵՄ ներկայացուցիչների հետ: Քննարկվեցին Հայկական ԱԷԿ-ի սթրեսս թեսթի արդյունքները և առաջարկությունների իրականացման նպատակով մշակված պլան ժամանակացույցը: ԵՄ-ի ներկայացուցիչները ցանկություն հայտնեցին այցելել Հայաստան՝ տեղում ծանոթանալու կատարված աշխատանքներին: Պայմանավորվածություն ձեռք բերվեց, առ այն, որ վերջնական հաշվետվությունը կներկայացվի ԵՄ 2019 թվականի սեպտեմբերին, իսկ ԵՄ-ի առաքելությունը կմեկնարկի 2019 թվականի նոյեմբերից:

Սեպտեմբերի 18-ին ԱԷՄԳ-ի Գլխավոր Կոնֆերանսի 62-րդ նստաշրջանի ընթացքում ներկայացրեցի ՀՀ պատվիրակության զեկույցը: Զեկույցում անդրադարձա ԱԷՄԳ-ի հետ սերտ համագործակցությանը, որի արդյունքում Հայկական ԱԷԿ-ի անվտանգության մակարդակը համեմատելի է Եվրոպական ԱԷԿ-ների անվտանգության մակարդակին: Զեկույցում ներկայացրեցի այն, որ Հայկական ԱԷԿ-ի անվտանգության մակարդակի բարձրացումը գտնվում է երկրի ղեկավարության ուշադրության կենտրոնում, ներկայացրեցի աստոմային էներգիայի խաղաղ նպատակներով անվտանգ օգտագործման բնագավառում կատարված աշխատանքները և դրանց արդյունքները: Վստահեցրեցի, որ ՀՀ-ն շարունակելու է ստանձնած պարտավորությունների կատարումը, և պատրաստ է ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության շրջանակներում ՀՀ-ում կազմակերպել և անցկացնել ինչպես տարածաշրջանային, այնպես էլ միջազգային հանդիպումներ:

ՀՀ պատվիրակության ելույթից հետո ելույթ ունեցավ Ադրբեջանի Հանրապետության պատվիրակության ղեկավարը, ով ինչպես միշտ բարձրացրեց Ադրբեջանի տարածքի այսպես կոչված «ամբողջականության» հարցը: Օգտագործելով ԱԷՄԳ-ի ամբիոնը ոչ նպատակային նշեց ՀՀ-ի կողմից ԱԴ-ի տարածքի 20%-ի «օկուպացված» լինելու փաստը: Օգտվելով մեղադրանքին արձագանքելու իրավունքից, ՀՀ պատվիրակության ղեկավարի տեղակալ, Ավստրիայի Հանրապետությունում ՀՀ դեսպան պարոն Արման Կիրակոսյանը արձագանքեց, նշելով, որ ԱԷՄԳ-ի կառավարիչների անդամակցության թեկնածուն իրավունք չունի նման անհեթեթ և ԱԷՄԳ-ի հետ կապ չունեցող թեման բարձրացնել ԱԷՄԳ-ի Գլխավոր Կոնֆերանսի շրջանակներում:

Սեպտեմբերի 18-ին կայացավ ՀՀ պատվիրակության հանդիպումը ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության բաժանմունքի ղեկավարության հետ, որի ընթացքում ներկայացվեց հետագա համագործակցության ծրագրերը և ՀՀ միջուկային անվտանգության կոմիտեի նախագահի կողմից ստորագրվեց Երկրի համագործակցության շրջանակային փաթեթը:

Սեպտեմբերի 18-ին ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Ղազախստանի պատվիրակության կազմակերպած միջոցառմանը նվիրված Ղազախստանի անդամակցությունը ԱԷՄԳ-ի Արևելյան Եվրոպական Խմբում:

Սեպտեմբերի 19-ին կայացավ հանդիպում ՀՀ պատվիրակության և ԱԷՄԳ-ի սեյսմիկ ու հրաբխային անվտանգության ռիսկերի գնահատման բաժանմունքի հետ, որի ընթացքում քննարկվեց ՀՀ-ի կողմից ներկայացված ծրագրի իրականացման ընթացքը, ներկայացվեցին ԱԷՄԳ-ի ներկայացուցիչների հարցերի պարզաբանումները: Պայմանավորվածություն ձեռք բերվեց անցկացնել ԱԷՄԳ-ի նախնական առաքելություն՝ Հայկական ԱԷԿ-ի սեյսմիկ և հրաբխային ռիսկերի ծրագրի գնահատման նպատակով:

Սեպտեմբերի 19-ին ՀՀ պատվիրակությունը մասնակցել է Ֆրանսիայի Հանրապետության ցուցահանդեսին՝ նվիրված մոդուլյար էներգաբլոկներին: Ցուցահանդեսին քննարկվեցին ինչպես անվտանգության ապահովման այնպես էլ տեխնիկատնտեսական հիմնավորման և բիզնեսի տեսանկյունից նպատակահարմարության հարցեր:

Սեպտեմբերի 19-ին ՀՀ պատվիրակությունը հանդիպել է ՉԺՀ պատվիրակության ներկայացուցիչների հետ, քննարկվել են հետագա համագործակցության շրջանակները և մշակված Ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման մասին միջկառավարական համաձայնագրի նախագիծը:

8. ՀԱՆԴԻՊՄԱՆ ԿԱՄ ՀԱՎԱՔԻ ԺԱՄԱՆԱԿ ԸՆԴՈՒՆՎԱԾ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ, ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍՏՈՐԱԳՐՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ

Սեպտեմբերի 18-ին կայացավ ՀՀ պատվիրակության հանդիպումը ԱԷՄԳ-ի տեխնիկական համագործակցության բաժանմունքի ղեկավարության հետ, որի ընթացքում ներկայացվեց հետագա համագործակցության ծրագրերը և ստորագրվեց Երկրի համագործակցության շրջանակային փաթեթը:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԸՆԹԱՑՔ ՏԱԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ՝ ԵՂԱՆԱԿԸ, ՁԵՎԸ, ԺԱՄԿԵՏՆԵՐԸ, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ, ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Շարունակել սերտ համագործակցությունը Ատոմային Էներգիայի միջազգային գործակալության հետ, Հայաստանում ատոմային էներգիայի խաղաղ նպատակներով օգտագործման ընդլայնման նպատակով:

ՀՀ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ

ԳԱՐԵԳԻՆ ԲԱՂՐԱՄՅԱՆ